



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ուսուցիչների համագործակցությունը և փորձի փոխանակումը:

Ուսուցիչ՝ Վիկտորիա Զաքարյան

Դպրոց՝ «Տիգրան Մեծ»-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան

Վերապատրաստող՝ Շուշան Վարդանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան	Էջ 3
2. Գրականության ակնարկ	Էջ 5
3. Գործնական համատեքստ	Էջ 8
4. Հետազոտության ընթացք	Էջ 11
5. Ամփոփում	Էջ 15
6. Գրականություն	Էջ 17

ՆԱԽԱԲԱՆ

Նոր տեխնոլոգիաների օգտագործումը հեղափոխություն է առաջացնում դպրոցում, և այդ պատճառով անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ոք (ինչպես ուսուցիչը, այնպես էլ աշակերտը) սովորի այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ է այս ոլորտի վերաբերյալ, ինչը շատերին հուզում է: Տեղեկատվության և գիտելիքի նոր տեխնոլոգիաները դրանք են, որոնք կրճատ եղանակով կոչվում են ՏՀՏ: Դպրոցները սկսում են ՏՀՏ-ն ունենալ որպես ուսումնական ծրագրի հիմնական մաս, այսինքն՝ եթե ուսանողները պատրաստվում են թողնել հասարակության համար պատրաստված դպրոցը, անհրաժեշտ է Նոր տեխնոլոգիաների օգտագործումը:

Երբ երեխաները սկսում են տարրական դպրոցը և մինչև համալսարան, ուսանողները պետք է սովորեն օգտագործել այս խիստ անհրաժեշտ ռեսուրսները, որպեսզի կարողանան գործել այսօրվա հասարակության մեջ: Նոր տեխնոլոգիաներում տարբեր տեխնիկայի և ռազմավարության օգտագործումը շատ անհրաժեշտ է, որպեսզի կարողանանք հետևել մեր հասարակությանը և մշակույթին: Եվ դա այն է, որ մենք զարգանում ենք գլխապտույտ տեմպով, և դա տեղի է ունենում նաև ՏՀՏ-ի դեպքում, այդ պատճառով շարունակական վերապատրաստումն այս առումով անհրաժեշտ է ինչպես ուսանողների, այնպես էլ բոլոր մարդկանց համար:

ՏՀՏ-ն ավելի ու ավելի կարևոր գործիք և գործիք է կրթական հաստատություններում քանի որ դրանք առաջարկում են ուսման և ուսուցման տարբեր ձևեր, որտեղ ուսանողները կարող են ավելի հաճելի կերպով սովորել այս բազմակողմանի գործիքի շնորհիվ:

ՏՀՏ-ի օգտագործումը դպրոցի մաթեմատիկայի և ինֆորմատիկայի դասերին հնարավորություն է տալիս համակարգիչը օգտագործել որպես.

- գործիք մաթեմատիկական փորձերի կատարման համար,
- կոմունիկացիա. դպրոցի մակարդակով ցանցային ծրագրեր, համացանց-ծրագրեր: Ինֆորմատիկա և մաթեմատիկական առարկաների ինտեգրման ժամանակ ուսուցչի խնդիրն է սովորողների մոտ ձևավորել տեղեկատվական իրավասություն: Այդպիսի դասերը թույլ են տալիս ցույց տալ առարկաների կապը, սովորեցնում են

տեսական գիտելիքները օգտագործել գործնականում, զարգացնում
համակարգչային գիտելիքները, խթանում ինքնուրույն մտավոր գործունեությանը:
Յուրաքանչյուր սովորող ակտիվ աշխատում է, նրանց մոտ ձևավորվում է
հետաքրքրասիրություն, ճանաչողական ունակություններ: Այսօր համակարգչային
տեխնոլոգիաները կարելի է համարել գիտելիքների հաղորդման այն նոր միջոցը,
որը կապահովի ուսման ավելի բարձր որակ, թույլ կտա երեխային ավելի մեծ
հետաքրքրությամբ սովորել, գտնել տեղեկատվական աղբյուրներ, նոր գիտելիքներ
ձեռք բերելիս դաստիարակում է ինքնուրույնություն և պատասխանատվության
զգացում, զարգացնում է ինտելեկտուալ գործունեության կարգապահություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսների պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Արդի ժամանակաշրջանում անհրաժեշտ է ստեղծել պայմաններ երեխայի բնական ճանաչողական գործունեության զարգացման համար և նրա ինքնահաստատմանը անհատական փորձի կուտակման միջոցով: Վերջին տարիներին իրականացված ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացներում ներկայացվել են ուսուցման ակտիվ և համագործակցային մեթոդները: Դրանց կիրառումը այսօր կարևոր է, քանի որ ուսուցումը հնարավոր չէ առանց դասապրոցեսին սովորողի ակտիվ մասնակցության: Բայց ուսուցիչները արդարացիորեն դժգոհում են, որ դասարաններում առկա նստարաններով և աթոռներով հնարավոր չէ կիրառել այդ մեթոդները: Ստացվում է, որ մենք սովորեցնում ենք ուսուցման որոշակի մեթոդներ, բայց չենք ապահովում դրանց իրականացման համար անհրաժեշտ միջավայրը: Ճիշտ է, դասարաններում հայտնվել են համակարգիչներ, պրոյեկտորներ և ինտերակտիվ գրատախտակներ, բայց դրանք էապես չեն փոխել ուսումնական միջավայրը և շատ դեպքերում կատարում են «թանկարժեք գրիչի և հեռուստացույցի» գործառույթ: Երեխան ուսման պասիվ մասնակից է, դասերը մեծամասամբ միօրինակ են ու ձանձրալի, սովորողները մեծամասամբ հաղորդակցվում են միայն ուսուցչի հետ: Այս իրավիճակի հետևանքներից մեկն էլ այն է, որ դասի պատասխանատուն ուսուցիչն է, իսկ սովորողների մոտ ձևավորվում է անտարբերություն և անպատասխանատվություն:

Ի՞նչ մեթոդներով կարելի է բարձրացնել սովորողների հետաքրքրությունն այս կամ այն առարկայի հանդեպ: Ուսումնական նոր միջավայրը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա. նոր ուսումնական միջավայրում կենտրոնում պետք է լինի ոչ թե ուսուցիչը, այլ սովորողները: Ուսումնական գործընթացում երեխան ոչ թե պետք է նստի, լռի, լսի, երբեմն էլ խոսի, այլ առավելապես պետք է գործի, մասնակցի, աշխատի

և պատասխանատվություն ստանձնի: Մենք խնդիր ունենք ուսուցումը դարձնելու աշխատանքային գործընթաց, հակառակ դեպքում փոքր տարիքից երեխաների մեջ սերմանում ենք ծուլություն և անպատասխանատվություն: Մյուս սկզբունքն այն է, որ նոր ուսումնական միջավայրը պետք է լինի բազմանպատակ, շարժուն, բաց: Երեխաները պետք է հնարավորություն ունենան անհատական, գույգերով, փոքր ու մեծ խմբերով աշխատելու, ինչը հնարավորություն կտա ուսումնական գործընթացը դարձնել բազմազան և ոչ ձանձրալի: Նոր ուսումնական միջավայրում սովորողները պետք է հնարավորություն ունենան աշխատել ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Բացի այդ, երբեմն երեխաները միմյանցից ավելի լավ են սովորում, քան ուսուցիչներից: Վերջին տարիներին խրախուսվում են նմանօրինակ դասերի վարման եղանակները, բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր դասերին կարելի է կիրառել նոր, ինտերակտիվ մեթոդներ ու դասն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ պատկերացնել տվյալ դասին համապատասխանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու սովորողների կարողությունները, քանի որ յուրաքանչյուր դասի համար անհրաժեշտ է կիրառել սոցիալական հմտությունների ու արժեքային համակարգի ընտրության յուրովի մոտեցում: Այս և նմանօրինակ խնդիրներից գերծ մնալու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ հստակ տիրապետի առարկայական չափորոշչային պահանջներով ներկայացվող պահանջներին, իմանա սոցիալական հմտությունների և արժեքային համակարգի կշիռն ու դերը յուրաքանչյուր դասապրոցեսին անհատապես: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից սրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի

քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) դասերի հետևյալ տեսակները.

1. միջառարկայական - (երկու առարկաներ միջև՝ օր. Հանրահաշիվ-Երկրաչափություն)

2. բազմառարկայական -(երկուսից ավել առարկաներ միջև՝ օր. Մաթեմատիկա-Ֆիզիկա-Ինֆորմատիկա)

3. անդրառարկայական –(մասնագիտացված՝ տվյալ առարկայի ներսում)

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: Վերջին տարիներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նոր տիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին համատեղ դասեր: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միջտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Այս թեմայի շրջանակներում մենք կանդրադառնանք ինտեգրված ուսուցման այն բաղադրատարրին, որը, հիմնվելով միջառարկայական կապերի կիրառման վրա, հանդես է գալիս որպես սովորողների պոստենցիալ հնարավորությունները զարգացնող ուսուցում՝ նպաստելով նրանց բնական ճանաչողության դրդապատճառների խթանմանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերականգնում համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Արդի ժամանակաշրջանի ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հաստուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով, որը որոշակիորեն կարգավորված գործունեություն է՝ մանակավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված: Այժմ խիստ կարևորվում է, ոչ միայն սովորողների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները: Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը:

Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Այս թեմայի նպատակն է ընդգծել ինտեգրված ուսուցման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործընթացում, օգտագործելով միջառարկայական կապերը: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդալոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Սույն թեմայի նպատակն է ներկայացնել ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից մեկը, որն իրականացվում է ինտեգրված ուսուցման օգնությամբ: Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կներկայացնեմ ինտեգրված ուսուցման կիրառման իմ փորձը:

Ինտեգրված դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են

երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

Խոսելով մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաների ինտեգրման մասին՝ առաջին հերթին կարելի է նշել ալգորիթմի, ալգորիթմական մտածողության մասին: Ալգորիթմ հասկացությունը սերտորեն առնչվում է թե՛ մաթեմատիկայի, թե՛ ինֆորմատիկայի հետ: Ալգորիթմը հանդիսանում է ոչ միայն մտավոր գործունեության, այլև ընդհանրապես գործունեության ընդհանուր տեսակներից մեկը: Ալգորիթմ հասկացությունը թափանցում է ժամանակակից մաթեմատիկայի բոլոր ոլորտները՝ նախնականից մինչև բարձրագույն: Ալգորիթմը հանդիսանում է մաթեմատիկայի հիմնային հասկացություններից մեկը: Մաթեմատիկայի ուսուցումը ցանկացած մակարդակում անպայման իր մեջ ներառում է ալգորիթմի ուսուցումը: Ալգորիթմներ կազմելու և ձևավորելու կարողությունը կարևոր է ոչ միայն մաթեմատիկական մտածողության և մաթեմատիկական կարողությունների զարգացման համար: Այն ձևավորում է նաև կանոններ ձևավորելու և դրանց հետևելու գործընթացը: Ուսուցման ալգորիթմացումը ժամանակակից ուսուցման գործընթացում դիտարկվում է երկու իմաստներով՝ սովորողին ալգորիթմի ուսուցում, ինչպես նաև ուսուցման մեջ ալգորիթմների կազմում և իրագործում:

Իրենց հերթին, մաթեմատիկայից ստացած գիտելիքները սովորողին օգնում են յուրացնել «Ալգորիթմներ» թեման ինֆորմատիկայից: Մաթեմատիկական մտածողությունն, իր հստակությամբ, համակարգվածությամբ, հաջորդականությամբ, խստությամբ և տրամաբանությամբ, հանդիսանում է ճիշտ կազմակերպված մտածողության օրինակ: Մաթեմատիկայի և ալգորիթմների լեզվին տիրապետելը էականորեն ազդում է սովորողի լեզվական ունակությունների զարգացման վրա:

Մաթեմատիկայի դասերին շատ արդյունավետ է ամրապնդել և ընդհանրացնել ստացած գիտելիքները ինֆորմատիկայի օգնությամբ: Օրինակ, 8-րդ դասարանում կարելի է անցկացնել գիտելիքների ամրապնդում՝ հանձնարարելով սովորողներին

պատրաստել սահիկներ «Քառանկյուն» թեմայից՝ օգտվելով երկրաչափության դպրոցական դասագրքից: Նրանք սահիկները կարող են պատրաստել ինֆորմատիկայի ժամին, քանի որ արդեն ուսումնասիրել են Microsoft Office PowerPoint ծրագիրը: 7-րդ դասարանում երկրաչափության առաջին դասերին ուսումնասիրում են «Անկյուններ» թեման, որին շարունակություն կարելի է տալ ինֆորմատիկայի դասին «Paint ծրագրում նկարներ, համակարգչային գրաֆիկներ» թեմայի ժամանակ:

Ինտեգրված դաս կարելի է անցկացնել նաև «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի հիմունքներ» առարկայից «Գրաֆիկի ձևափոխություններ» թեմայի կրկնության ժամանակ: Սովորողները, օգտագործելով Advanced Grapher ծրագիրը, կարողանում են տարրական ֆունկցաների գրաֆիկներից ավելի բարդ ֆունկցաների գրաֆիկներ կառուցել: Նրանց մոտ մաթեմատիկական գիտելիքը ավելի լավ է ամրապնդվում, ինչպես նաև կարողանում են ճիշտ կիրառել տվյալ ծրագիրը ինֆորմատիկայի ժամանակ:

Ինտեգրված դասերի հենքը միջառարկայական կապերի հաստատումն է և առարկաների «հոլիստիկ» ընկալումը: Դրանց կարևորություն մասին խոսել է նաև մանկավարժության որպես գիտության հիմնադիր Յա. Ա. Կոմենսկին: Իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նա նշում է, որ առարկաների միջև եղած կապը երեխաներին սովորեցնում է բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և, որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև: Սա բացատրվում է նրանով, որ երբ ուսուցումը կատարվում է կապերի միջոցով, փոխկապակցվածությունը հնարավորություն է տալիս վեր հանել պատճառները, ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մեկ այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում տարբեր բնագավառներից, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այսպես, սովորողի մոտ զարգանում են ճանաչողական գործունեությունը և քննական մտածողությունը, ձևավորվում է ստեղծագործական միտքը, որի արդյունքում վերջինս կկարողանա տարբեր բնագավառների գիտելիքները համախմբել, ինտեգրել մեկ հարցի շուրջ ու լուծել այն: Այլ կերպ ասած, ինտեգրված դասը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռմանը:

Հետազոտությունն անցկացրել եմ 11-րդ դասարանում: Ինտերգրում իր մեջ ներառում էր երկրաչափություն և ինֆորմատիկա առարկաները:

Թեմաների համապատասխանությունը թույլ է տալիս սովորողների մոտ զարգացնել տեսական և գործնական հմտություններ: Մաթեմատիկայի տեսական դասերը օգտագործել գործնականում և հասկանալ առօրյա կյանքում դրա անհրաժեշտությունը և կիրառությունը:

Հետազոտության ընթացքում դիտարկվեցին սովորողների գործունեությունը թե անհատական աշխատանքների դեպքում, թե խմբում դերակատարում ունենալու

տեսանկյունից, ինչպես են միմյանց օգնում, համագործակցում, շփվում, հաղորդակցվում: Դիտարկվեցին նաև թեման համառոտ, տեսանելի և բովանդակալից ներկայացնելու նրանց կարողությունները, երկրաչափական պատկերները գծագրելու, անհրաժեշտ հաշվարկներ կատարելու, դրանք բնութագրելու կարողություններն ու հմտությունները:

Հետազոտությունն անցակցրել էմ ներքոնշյալ դասերի պլաններով:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Երկրաչափություն-ինֆորմատիկա

11-րդ դասարան (2 դասաժամ)

Դասի թեման- Գլան, կոն, գլանի և կոնի մակերևույթների մակերեսներ:

Դասի նպատակը

ա) ակադեմիական- իմանալ գլանի և կոնի տարրերի անվանումները, մակերևույթների մակերեսների բանաձևերը, կարողանալ կիրառել խնդիրների լուծման մեջ:

բ) սոցիալական-սովորողներին հնարավորություն տալ համագործակցելու, զարգացնել լսելու, հակիրճ, արագ արտահայտվելու կարողությունը, հնարավորություն տալ վստահություն ձեռք բերել սեփական ուժերի նկատմամբ:

Դասի կահավորումը, անհրաժեշտ պարագաներ-համակարգիչ, պրոյեկտոր, գլանի և կոնի վերաբերյալ ցուցադրական նյութեր, հարցերի և խնդիրների հավաքածու:

Վերջնարդյունքներ

1. Բարձրանում է սովորողների գիտելիքների մակարդակը, պատասխանատվությունը: Յուրաքանչյուր սովորող գիտակցում է իր կարևորությունը ընդհանուր գործում:
2. Վստահություն սեփական ուժերի նկատմամբ:
3. Չարգանում է ուշադրությունը շրջապատի նկատմամբ:
4. Գիտելիքների թարմացում, ինֆորմատիկայի համապատասխան նյութի իմացության անհրաժեշտության գիտակցում:


5. Գիտակցել երկրաչափության այս թեմայի անհրաժեշտությունը: Գիտակցում են իրենց կարևորությունը խմբում: Կարևորվում է արագ կողմնորոշվելու կարողությունը, ստուգում խնդիր լուծելու կարողությունը:
6. Սկսած գործը մինչև վերջ հասցնելու անհրաժեշտության գիտակցության ձևավորում: Երևակայության, հիշողության զարգացում:
7. Գիտակցում, որ իրենք ևս կարող են կազմել առաջադրանքներ:

Դասից 1 շաբաթ առաջ

Դասարանը բաժանվում է 4 հոգանոց 6 խմբերի: Խմբերից 3-ը՝ "գլաններ"-ը պետք է պատրաստեն համակարգչային ցուցադրական նյութ գլանի վերաբերյալ, մյուս 3-ը՝ "կոններ"-ը կոնի վերաբերյալ: Խմբերը ունեն ավագներ, ովքեր օգնում են խմբի մյուս անդամներին լրացնելու գիտելիքները գլանի և կոնի մասին: "Գլաններ" խմբերը պատրաստում են գլանաձև գլխարկներ, "կոններ" խմբերը՝ կոնաձև:

Դասի ընթացքը

1. Առաջին 3 խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է գլանը առօրյայում, մյուս 3-ը՝ կոնը առօրյայում:
2. Գլանի վերաբերյալ համակարգչային նյութերի ցուցադրում:
3. Ամբողջ դասարանին առաջադրվում է կիրառական խնդիր գլանի վերաբերյալ:



Լուծում են խմբերով և ներկայացնում:

Հարցեր և խնդիրներ գլանի վերաբերյալ, որոնց

պատասխանում են "կոներ"-ը: Անց է կացվում մրցույթի ձևով, հաշվի առնելով

սովորողների կարողությունները: Յուրաքանչյուր սովորող

կարող է միավոր բերել իր խմբին:

5. 6-8.- 3-5 քայլերը կոնի վերաբերյալ:

6. Անդրադառնալ չլուծված խնդիրներին:

7. Առաջին սովորողը գլանը բնութագրող որևէ բառ է ասում, հաջորդը կրկնում է այն և ավելացնում նոր բառ և այսպես շարունակ:

Նույնը կոնի համար:

Անդրադարձ, գնահատում_

Հարցեր_

1) խմբով աշխատանքը օգնել է դասին ավելի լավ պատրաստվելուն, թե՞ կնախընտրեիր միայնակ պատրաստվել:

2) Դասի ո՞ր պահն էր քեզ համար պիտանի , որը կարևոր չէր:

Քաջալերել ակտիվ մասնակիցներին, վստահություն ներշնչել կաշկանդվածներին:

Տնային հանձնարարություն.

Ստեղծել գեղարվեստական նյութ գլանի կամ կոնի մասին (չափածո կամ արձակ):


ԴԱՄԻՑ ՀԵՏՈ

Սովորողները հիմնականում գիտեին նյութի տեսական մասը, բայց 3-4 սովորող անվստահ էր:

Համագործակցությունը ստացված էր:

Ժամանակի բաշխումը գրեթե իրատեսական էր, որոշ սովորողներ դանդաղ էին աշխատում:

Հաջորդ դասերին արտահայտվելու ավելի շատ հնարավորություն տալ նշված սովորողներին: Ավելի շատ բանավոր հաշիվ պահանջող առաջադրանքներ հանձնարարել, որպեսզի նրանք ավելի արագ աշխատեն:



ԱՄՓՈՓՈՒՄ

Դպրոցի արդիականացման ընթացքում կրթության մեջ տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են սովորողի ազատ դաստիարակությանը, ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինքնահաստատմանը, ինքնուրույնության զարգացմանը, մրցակցայնությանը: Ինտեգրումը չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝ նպատակային դասը: Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում:

Կարող եմ իմ սեփական փորձից մեջբերել օրինակներ. տարբեր դասեր արվել են հենց ինտեգրված դասապրոցեսների միջոցով: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրությունը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ:

Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար ստեղծականություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել:

Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում տարբեր բնագավառներից, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այսպես, սովորողի մոտ զարգանում են ճանաչողական գործունեությունը և քննական մտածողությունը, ձևավորվում է ստեղծագործական միտքը, որի արդյունքում վերջինս կկարողանա տարբեր բնագավառների գիտելիքները համախմբել, ինտեգրել մեկ հարցի շուրջ ու լուծել այն: Այլ կերպ ասած, ինտեգրված դասը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռմանը:

Ուսումնասիրելով թեման ես կատարեցի հետևյալ եզրակացությունները.

1. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառման ժամանակ սովորողների մոտ ձևավորվում ու զարգանում են հաղորդակցվելու, քննադատելու, իրավիճակին հարմարվելու, բացատրելու, ապացուցելու, սովորելու և այլ կարողություններ
2. Ձևավորվում է ինքնուրույն մտածողություն, աշխարհաճանաչողություն, ինչպես նաև մտածելու ու համագործակցելու կարողություններ
3. Առաջանում են այս ուսուցման ժամանակ դժվարություններ, որոնք կապված են ժամանակի ռացիոնալ բաշխման ու օգտագործման, աշակերտների թիմերի կազմման և կազմած թիմերի հետագայում փոփոխման ընթացքում, նրանց մեծամասնությունը դժվարությամբ են փոխում թիմը, հետևաբար անհրաժեշտ է աշակերտների մեջ զարգացնել համագործակցային աշխատանքի մշակույթը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Սիրամարգ Վարդումյան, Իզաբելա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ»: Երևան 2011:
2. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա., Ս., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ). Երևան 2005:
3. Ուսուցման արդյունավետ հնարներ /Ս. Խաչատրյան-Եր; Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020, 74 էջ
4. Կ. Բաբայան, «Համագործակցային ուսուցումը հասարակական փոփոխությունների համատեքստում», Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր, M: 2016թ.
5. Համացանց, Վիքիպեդիա